ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 114 - Ա **29 հունիսի 2016 թ.**

ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՈՂԱՓՆԵՐՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԵՎ ԱՐԱԳ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՂԱՓՆԵՐՈՒՄ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթնով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի հունիսի 19-ի N 1565-Ա հրամանի պահանջները

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

1) 2016 թվականի հուլիսի 1-ից սեպտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում ժամը 09:00-ից 21:00-ը սահմանել լրացուցիչ հերթապահություն՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցով և բժշկական կենտրոնում ապահովել ծառայության անխափան աշխատանք.

2) աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակել և հաստատել հերթապահության ժամանակացույց և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ.

3) կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկուշաբթի տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ